

Ա. Բ. Ա. Ս Մ Ի Բ Զ Ս.

ՊԱՐՍԿԱՆԱՅԻՔ — ՌՈՒՍԱՅ ԷՋՄԻԱՅՆԻ ՏԻՐԵԼԸ

Դեռ այս դարուս սկիզբները մինչ Պարսկահայք կը հնծէին Պարսից խաներուն ծանր լծոյն տակ, մինչ Մահմատ Սղայի աւերիչ արշաւանաց յիշատակները քաղաքացի և գիւղօրէից մէջ ահուգոյով մը կը պատմուէին, և ամենայն չէհզատէ սարսափի և երկիւղի նիւթ մ'էր տեսնողաց համար, շատ անգամ Մառական գիւղին շինականը հարցուցած էին մէկմէկու՝ թէ ով էր արդեօք այն պարսկադէն մեծատուն և ճոխ ազայն որ ստէպ կը յաճախէր իրենց գիւղը, և ինչու ուխտի կը դիմէր նախափլալին վանքը և դրամով կ'օգնէր վանօրէից։ — Հարցմանս պատասխանը միշտ վրանին մեծ զարմացումն կ'ազդէր, և չէին կրնար հաւատալ որ այն ազնիւ և բարեկերթ երիտասարդն, այն հարուստ ուխտաւորը՝ ըլլայ Արաս Միրզա չէհզատէն, երկրորդ որդի չահին և թուռն եղբօր ներքինի Մահմատ խանին, այն որ իր հնծեալներովը քանի մ'անգամ չափեր չափսիքներ էր մեր երկիրը, Դեհրանէն մինչև ի վրաստան, և որուն անունը դեռ վախ կը չնչն Տփղիսու և մերձակայից։

Մահմատ Սղա Խաճար ցեղին նախահօր սպանմանէն վերջը՝ թագաւորութեան վրայ իշխեց բռնացու Ֆէթհ — Ալի կամ Բաբա խան, որ թէ հօրեղբօրը պէս իւր երկրին և թէ մերձաւորաց սարսափը չեղաւ, սակայն չունեցաւ նաև այն արութիւնը, այն հաստատամիտ արութիւնը՝ որ իր հօրեղբօր մեծագոյն յատկութիւնն էր, և որով սարսափելի ըրաւ պարսիկ անունը։ չունեցաւ դարձեալ յաջողութիւն թէ իր Ժողովրդոց և թէ օտարաց յարաբերութեան մէջ, և ամբողջ թագաւորութեան միջոց տառապեցաւ մանաւանդ իր որդւոց ձեռքէն, որոնք բազմաթիւ էին, և որոնց մէջ ծննդեամբ

երկրորդ կը յիշուի Աբաս Միրզա, պարսկային թագաւորութեան միակ յոյսը և եւրոպական Պետութեանց միակ սիրելի և նախանձորդ իշխանը, պապ՝ Նասրէտօնին շահին, որ այսօր կ'իշխէ Պարսկաստանի վրայ։

Երբ Աբաս Միրզայի մեծ հօրեղբայրը դիմեց ի վրաստան (1796), այրեց զՏփղիս և գերեց գերիցեց գերկիրը, Աբաս Միրզա տղայ էր և պատանի, և անշուշտ արքունիքէն դուրս մասնաւոր դաստիարակութեան մը յանձնուած Եւրոպացւոց ձեռք, որոնք այն միջոցին բազմաթիւ էին ի Պարսկաստան։ և ի Դաւթէթ բնակելով, հօն գտնուած հիւպատներուն և Հայոց մեծամեծաց հետ ունեցած կենակցութիւնն իր ճկուն և արթուն մտաց վրայ այնպիսի բարի ազդեցութիւն մ'ըրեր էին, որ թէ իր զինուորական և թէ քաղաքական կենաց մէջ պահեց այն ընդունած կնիքը, և ոյն պատճառաւ թերեւս մինչև վերջը մասնաւոր սէր մը կապեց անոնց ազգակցաց վրայ։

Իր կենաց առջի տարիներուն վրայ մինչև 1804 որոշ տեղեկութիւն մը չուրինք, յայտ է որ Պետութեան անդրաշիկը ինքը չըլլալով՝ բարեբաղդաբար յարքունեաց հետու կ'ապրէր, ուր յիրաւի շատ բարի օրինակներ պիտի չտեսներ իր հօրքով. որ Թաղիստեանց սարկաւազին պատմածին համեմատ, « Պարսկաստանի աշխարհն և արքունիքը իր կենդանութեան միջոց կանաւնոց մը դարձուց և մահուրնէ վերջն ալ սպանդանոց »։ Արդ արքայորդին այսպիսի արքունեաց մը մէջ՝ զարմանք չէ որ շատ յարուսն չգտաւ, աւելի բընտրուց Եւրոպացւոց կամ լաւ ևս ըսել լինդգիւացւոց ընկերութիւնը՝ որոնք բազմացեր էին արքունեաց մէջ, և մրցելով Ռուսաց հետ, փոփոխակի կը բար-

ձրանային և կ'իջնային իրենց ազդեցու-
թեան համեմատ :

— Անդդիտաղիք՝ որոնք քիչ առաջ Հրնդ-
կաստանի մէջ ընդարձակուեր էին,
Պարսից հետ միաբանելով՝ կ'ուզէին
արդեւք մ'ըլլալ Ռուսիոյ, որ հիւսիսա-
յին սառուցեալ երկիրներով շատա-
ցեալ հիմայ դէպ 'ի հարաւ կը դիմէր
արեւ և ջերմութիւն խնդրելու, և ան-
գղիական ընկերութիւնը կը վախէր որ
Ռուսիոյ այս փափաքը մինչև Հնդկաց-
ծովն ալ չհասնի. այս պատճառաւ ահա
ամեն ջանք կ'ընէր զՊարսկաստան ի-
րեն կողմն ձգելով պատուար մը յա-
րուցանել ընդդէմ Ռուսաստանի: Բայց
այս նախանձու մրցման մէջ տուելի յա-
ջող գտնուեցաւ Ռուսաստան, նախ իր
զինուք և ապա առանձնական բարե-
կամութեամբք, որուն կապը թէ ոչ 'ի
սկզբան՝ բայց յետոյ եղաւ նոյն իսկ Ա-
բաս Միրզա, որ հիմայ պատանեկու-
թեան հասակն ալ անցուցեր էր և դեռ
բարեկամութիւնը ձեռք չառած՝ ստի-
պուեցաւ նախ զինուք մրցիլ ընդդէմ
Ռուսաց, որոնց բանակը կը յառաջէր 'ի
Հայաստան:

Եւ արդարև Պարսից և Ռուսաց մէջ
պատերազմը սկսեւ էր, որուն զխա-
ւոր պատճառներէն մին ալ իջմիածնի
կաթողիկոսական աթոռոյն երկպառա-
կութիւնը կրնար համարուիլ. որով-
հետև Դաւիթ արքեպիսկոպոսը հակ-
աթոռ ելեր էր Դանիելի, որ օրինաւո-
րապէս ընտրուած՝ կու գար իջմիածին.
Դաւիթ շահելով զիրեանու պարսիկխա-
նը՝ բանտ դրեր և նախատինքներ կրել
տուեր էր Դանիելի: Բայտինի է որ ուղիղ
մասը չէր կրնար համբերել այս նա-
խատանաց որ իրենց հովուապետին
կ'ըլլար, և Դաւիթ բռնութիւններէն
ազատելու համար ուրիշ հնարք չէին
տեսնար, բայց գիմել առ երազահաս
կայսրն Աղեքսանդր, որ ինքզինքը միշտ
պատրաստ կը ցուցնէր օգնութեան
հասնելու: Յիցիանով՝ Վրաստանի կըտ-
րիճ և խոհական կուսակալը՝ հրաման
ընդունեցաւ բանակը շարժելու. նախ
Գանձակի վրայ դիմեց, որուն խանը չէր

ուզեր տուրք վճարել, ինչպէս կ'ընէր եր-
բեմն երբ վրաց թագաւորութիւնը դեռ
կանգուն էր. և պաշարելով զԳանձակ՝
առաւ զայն Ս. Եղիսարեթի տօնին՝ օրը,
որով և 'ի յիշարակ կայսրուհւոյն՝ ա-
նուանեց զայն Եղիսարեթուպօլիս:
Անկէջ շուրջ երեանայ վրայ (1804
յուլիս), ուր հասաւ նաև Ֆէթհ-Ալի
Պարսից շահը մեծ բանակով, զոր հրա-
ւիրեր էր երեանու Մէհմէտ խանը:

Ռուսք ամենայն ջանք և արուժիւն
թափեցին տիրելու այն ամուր բերդին,
սակայն տեսնալով որ պաշարումը կ'եր-
կարի և պաշարը կը պակսի, Յիցիանով
հրաման տուաւ նահանջի, և շահը Ռու-
սաց մեկնեցն վերջը իջմիածին մըտ-
նալով, հաստատեց Նորէն գլխաւիճ, և
զԴանիէլ յանձնեց Մարաղսյի Մէհմէտ
խանին որ պահէ:

Սակայն Յիցիանով իր նահանջէն
վերջն ալ ընթացքը շարունակեց դէպ
'ի Կասպից ծովը և հասաւ Բագուի դի-
մաց, որուն խանը նենգութեամբ հրա-
ւիրեց զուս զօրավարը քաղաք մտնա-
լու. Յիցիանով անկասկած՝ փողոցնե-
րուն մէջ յաղթանակաւ յառաջելու
ատեն՝ զնդակէ մը հարուածեալ ինկաւ:
Այսպիսի վատ ոճիր մը Ռուսք չէին
կրնար անպատիժ թողուլ. Պուլկադոֆ
զօրավարն 'ի վրէժինդրութիւն այս
եղերան՝ զԴարբանդ առաւ Շէխ-Ալիի
ձեռքէն, որ Յիցիանովի դէմ գաւա-
կցութեան մասնակից էր, և անկէ վերջը
ուս զօրավարները ցրուեցան Պարսիկ
խաներուն իշխանութիւնը ջնջելու, ո-
րոնք հարստահարութիւններով կը նե-
ղէին քրիստոնէայ ժողովուրդները: Եւ
ահա այս միջոցիս էր որ առաջինն
գամ Մրաս Միրզա ալ 20,000 զօրաց
գլուխ կեցած՝ իր հօրը հրամանով ան-
ցաւ Երասխը և օգնութեան վազեց այս
տառապեալ և տառապեցընող խանե-
րուն: Բայց լսելով որ կուտովիչ զօրավա-
րը Տիգրիսի քով ջախջախեւ է տաճիկ
գունդերը, որոնք իրեն հետ միանա-
լու կու գային, խոհմութիւն համարե-
ցաւ քաշուիլ առ ժամս, և իր գալուստը
այս արդիւնքը միայն ունեցաւ՝ որ Ռուսք

համարձակ չկողան արշաւել . և միոյն տառիս անդին փոքրիկ գուպարածներ հանդիպեցան , որոնք տեղեցին մինչև 1814 , յորում միաւստաւան Նաբոլէոնի գէմատիպուած ըլլալով զօրք հաղթենել , Շահը Անգղիոյ տուն տալովը հաւանեցաւ հաշտութիւն խօսիլ , և երկու պատերազմողք կիշխաւաւն քաղաքին մէջ դաշինք մը դրին , որով Շահը Ռուսաց կայսեր կու տար զԵրիւստան , և կը հրաժարէր ամեն իրաւունքէ Ապազիոյ , Տաղըստանի և վրաստանի վրայ :

Հաշտութենէն վերջը երկար ժամանակ և կրնանք ըսել մինչև ցամա 1827 թէ Պարսիք և թէ Պարսկահայք խաղաղութեան մէջ անյուցին , և մանաւանդ կրնանք ալ աւելցնել որ Պարսից վիճակին Հայք շատ աւելի հանգիստ կը գտնուէին քան զնոյն իսկ բնիկ Պարսիկս : Աբաս Միրզա ալ այս պարապոյ միջոց սկսաւ սորվիլ և տեղեկանալ եւրոպական կարգաց վրայ : Իր մեծամեծ յատկութեանց համար , արեւունաց մէջ թէ Շահին և թէ եւրոպացւոց մէջ հատիկ սիրելի առարկայն եղած էր քան զամեն իրեն ուրիշ եղբայրները : Յայտնի է որ փութով նախանձ պիտի ծնանէր . ուսկից խոյս տալով ստիպուած էր ժամանակը որսովք և ճանապարհորդութեամբք անցընել . և այս ճանապարհորդութեանց մեծագոյն նպատակներէն մէկն էր զրամով և սիրով օգնել կարօտելոց , ուրիշ մ'ալ կատարել երախտագիտութեան պարտք մը , և յիշել այն գառն օրերն յորս արտասուօք կը առաւապէր , տեսնելով որ բնաւ որդի մը չէր ունենար իր սիրելի կողակցէն . և այս վիշտս այնքան աւելի մեծ եղեր էր , մտածելով որ իր հայրը խոտելով իր մեծ եղբորն անգրանկութեան իրաւունքը , զինքը զԱբաս գահուն ժառանգ անուաներ էր . և հիմայ ինքը որդի չունէր : Այս սրտի տխրուիւնէն հօս հօն թափառելու միջոց , դիտել և տեսեր էր հայ ուխտաւորաց բազմութիւնը որ կը դիմել Նախապկային վանքը , և մեծ ասորժանք մօտիկ կ'ընէր հօն եղած հրաշից պատ .

մութեանց : Աբաս Միրզա որչափ որ պարսկադէն ըայց ունենալով ինքն ալ այն միտումը զոր ցայսօր կը դիտենք շատ մը պարսկադէնից և մահմէտականաց վրայ , ինքն ալ սկսաւ յաճախել ուխտի Նախապկային վանքը՝ ընծայիք և պատարագօք , որոնց մէջ պլնձէ ոսկեզօծ ամանները անուանի էին . և քիչ վերջը , 1812ին միջոցները , ունեցաւ որդի մը , յետոյ ուրիշ մ'այլ , որոնց իմացուց թէ քանի աղօթիւք ինդրեր էր այս շնորհքը , Հիմայ այն ուխտին տեղ գոհութեան պարտքը կը կատարէր իր որդւոց հետ , յորս Զիհանկիր և Խոսրով Միրզայի ընծայքն ամենէն հարուստ ներն էին՝ ըստ վկայելոյ ժամանակաց 1 :

Ահա այս յիշատակներն էին որ աւելի սէր մը շնչեր էին Աբաս Միրզայի Հայոց վրայ , և այն քաղցր ընդունած շնորհքներէն վերջը իրեն համար բնականութեան և որսորդութեան տեղ մը դարձան այն կողմերը , և ստէպ կը յաճախէր Մառաքան դիւղը՝ ի Մարանդ , որ նոյնպէս երբեմն ձմերոց էր մեր Աթուրուին թագաւորաց , և Գաղիկ մեծաւ մեծ շէնքեր կառուցուծ էր հօն : Բայ ի Նախապկային վանաց՝ ուրիշ վանքերու ալ սկսաւ հասնիլ օգնութեան , և լսելով մանաւանդ որ Էլմիսանի աթուրալքաւորութեան մէջ է , այնչափ աւտեն շփոթից և խաներուն հարստահարութեանց պատճառաւ , տարին հարիւր թուման թոշակ մը կապեց 2 :

Ահա այսպիսի քաղցր զբաղանքներու պարապելալ էր , երբ իւր հայրը տօգոհ իր խոտանի գաշանց և Պարսկաստանի սահմանաց վրայ , իր արի որդին նորէն կանչեց գլուխ կենալու նոր բանակի մը , որ կը պատրաստուէր Հայաստան արշաւելու :

Ռուսք յանկարծակիի եկան . և որովհետեւ առձեռն պատրաստ բանակ մը չկար , անոր համար երմուղի վրաստա-

1 Ճանապարհորդութիւն ի Հայաստան . Կառնի օրագիր , 476 :

2 Մեր Մագիստրոս :

նի կուսակալին հօս հօս ցրուեալ գուն-
գերը ընդ ամենը 4,000 հոգի ժողովե-
ցան հայկազն Մատաթեան զօրավարին
քով Գանձակոյ սահմանները, որ նախ
Շամխորի քով զարնուելով Պարսից լո-
կատի մը հետ, որուն կը զօրավարէր
անուամբ և եթ Սբասի որդւոց մին՝
Մոհամմէտ, յաղթեց անոր և շատ
մարդիկ գերի տարաւ . յետոյ Մատա-
թեան գնաց միանալու փառքիւի զօրա-
վարին հետ, զոր նիկողայոս կայսրն
պատերազմին սպարապետ անուա-
նէր էր :

Աբաս Միրզայի ձեռաց տակ եղած
զօրքը 24,000 էր, և զօրավարնին տես
նալով Ռուսաց անպատրաստութիւնը՝
միտքը դրաւ ուղղակի չուել Տփղիսու
փրայ, Թերևս կ'ուզէր Տփղիսեցոց իր
գթոտ և համբոյր բարքը ցուցնելով
մոռցնել տալ ինչ որ իր մեծ հօրեղ-
բայրը գործեր էր, և անոր աւերածնե-
րուն տեղ՝ նոր շինածներ բարձրացնել.
բայց Շուշի փղբրիկ ամրոցը արգելք
եղաւ իր այս խորհրդին, որուն բնակիչը
խափանեցին արքայորդոյն քայլերը,
և դիւցազնական արութեամբ վեց շա-
բաթ զիմացան խիստ պաշարման մը.
մինչև Աբաս Միրզա փոխելով իր դի-
տաւորութիւնը, ընթացքը դարձուց
դէպ 'ի Գանձակ, ուր 10,000 հոգով
բանակած էր փառքիւի Մատաթեան
զօրավարին հետ, և ֆիւրակ գետին ե-
զերքը պատերազմ տուաւ Ռուսաց :
Ռուսք գրեթէ ընկճուելու վրայ էին,
երբ փառքիւի հեծեալզօրուն գլուխ կե-
ցած, արծույ պէս խղդրացաւ Պարսից
վրայ, և հաագին հրաձգութեամբ ա-
նոնց աջ թիւը խորտակելով, պահեստի
գնդով մ'ալ փախստէից ետևէն ինկաւ
և զանոնք երասխէն անդին անցուց :
Պարսից կողմանէ անկեալք և վիրա-
ւորք բազմաթիւ և հազարաւորք եղան.
Իսկ Ռուսաց կողմանէ որչափ որ ալ
պաշտօնական յիշատակարանք զայն
300 կը ցուցնեն, սակայն այսպիսի
թիւ մը շատ նուազ և զրեաթէ անկա-
րելի կ'երևայ : Այս յայտնի է որ այս
պատերազմէն վերջը Ռուսք յաղթա-

նակաւ մտան 'ի Նախիջևան և յԱբա-
սապատ բերդը, զոր քիչ առաջ շիներ
և ամրացուցեր էր Աբաս Միրզա, և կըր-
կին անգամ՝ նորէն հարուածելով Պար-
սից բանակը ձիվանսպուլխի մօտ քա-
շուեցաւ ձմերոյները :

Այս պատերազմներուն մէջ զիտեց
և տեսաւ Աբաս Միրզա որ ինչքան
յն տաժնաց էին Պարսիկք զինուորա-
կան արուեստին և կրթութեան մէջ,
և աւելի բազմացուց իր լանքն ան-
գղիացի և գաղղիայի զօրավարաց օդ-
նութեամբ կրթելու իր գունդերը,
կուտելով միանգամայն Պարսիկ զօրուն
գաւառական և մանաւանդ կրօնական
նախապաշարմանց դէմ : Բայց, եթէ
ասկէ վերջի պատերազմներուն մէջ ալ
ընդդէմ Ռուսաց չունեցաւ մեծ յաջո-
ղութիւն մը, այսու հանդերձ բնաւ չի
նուազիր իր արդիւնքը զինուորական
յառաջդիմութեան մէջ, որուն հա-
մար նոյն իսկ իր թշնամի զօրավարէն
և եւրոպական պետութիւններէն մե-
ծամեծ գովեստներ ընդունեցաւ : Իր
պարտութիւնքը բնաւ զինքը անպա-
տիւ չեն ընէր, այլ մեծապէս կը բար-
ձրացնեն իւր հակառակորդ զօրավարն
զմշտայադիմ փառքիւի, որ դարուս
առաջին զօրավարաց կարգն անցած է :

Մակայն եղանակն առաջ կ'երթար .
սառուցեալ դաշտերը սկսեւ էին հալիլ
և դալարագեղ տերէները և ծաղիկնե-
րը կ'աւետէին Հայաստանի այն հրա-
շալի գարունը՝ զոր մեր քերդոքը ան-
մահացուցին : Եթեաւն Այրարատայ
դաշտերուն վրայէն սողացեր անցեր
էր, և մերձակայ դիւորէից գութեր
էր որ պատրաստ բանակներ դիմա-
ցէ դիմաց կեցեր են մէկմէկու հետ
զարնուելու : Քաղաքաբնակք և շինա-
կանք, որոնք շատ տարինքէ 'ի վեր
Պարսիկ խաներուն տուրքեմէն ընկ-
ճեալ կը հառաչէին, հիմայ մօտ տես-
նալով քրիստոնէայ պետութեան մը
բանակը՝ արտեանդն կ'աղօթէին անոր
հովանաւորութեան ներքև մտնալ .
նոյն ուխտը կ'ընէին նաև Էմիթանի
միաբանք, որոնք թէպէտ տեսած էին

Աբաս Միրզայի ազնիւ ձիրքերը և վաշ-
լած էին անոր բարերարութիւնը,
բայց գիտէին ևս որ Աբաս Միրզայի
տեղ կրնային ուրիշներ գալ և նոր
նոր տուրքերով գիշատել զժողովուրդը,
և պատերազմին աղիտից վրայ ընտա-
նեկան անպատուութիւնքն ալ աւել-
ցնել. անոր համար առանց ապերախտ
գտնուելու իշխանին, կրնային փափա-
քիլ ոռոս բանակին, որ գարնան գրանց
բացուելուն պէս, իշլաւ Ալթարատայ
դաշտը, և մօտեցաւ Էջմիածնի, և ուր
ընդ առաջ ելան փառաւոր հանդիսիւ
եպիսկոպոսունք և վարդապետք և բո-
վանդակ միաբան ուխտ եկեղեցւոյն,
ամենայն շքեղ զարդուք: Ռուս զօրա-
վարն անկէ շարունակեց ընկնացը
Ներսէս Աշտարակեցի արքեպիսկոպո-
սին հետ դէպ յերևանսոյ ամրոցը:

Երբ արքայորդին զայս լսեց, 12,000
զօրօք եկաւ բանակեցաւ Օշականայ
դաշտը, և հօնկէ հետեակաց գունդ մը
զրկեց որ Էջմիածնի արտաքին պարիս-
պը ռմբակոծեն, բայց այս շիկատը լսե-
լով որ Ռուսաց իրասովքի զօրավարը
2,500 հետակօր և 500 հեծելովք պա-
շարելոց օգնութեան կու գայ, նորէն
դարձաւ միանալու մայր բանակին
հետ: Աբաս Միրզա փութաց բռնելու
քարաժայռ կիրճերն, ուսկից պիտի
անցնէին Ռուսք և իրասովքի հետ
օգնութեան եկած գունդերն. առջինը
քաջութեամբ կռուելով անցաւ, բայց
վերջինը մինչ անկասկած կը յառաջէր
և զինուորներէն մաս մը ծարաւն ան-
ցընելու համար առուակի մը վրայ դի-
մեր էր, Պարսիկք վրանին ինկնալով
մեծ կոտորած ըրին:

Չմ ուղեր անյիշատակ թողուլ աղ-
գային ոգւոյ եռանդեան կայծ մը՝ զոր
Ռուսաց պետութիւնն այն ժամանակին
արժարժեց 'ի Հայս, և զոր Չարմայր
Մսեր այսպէս կ'աւանդէ՝ իւր հօր, յիշա-
տակարանաց ծանօթութեանց ներքեւ.
« Ժամանակիս այսմիկ վերաբերին նաև
« եղեալքն 'ի տէրութենէ Ռուսաց Աղդ-
« արարութիւնն առ Հայս և Անաչաւ,
« դրոշմին Հայոց նոր սարքովոյ զօ-

« քի խաւար, որոց տպագիր օրինակքն
« գտանին 'ի մատենադարանի հօր ի.
« մոյ (Մսեր Մագիստրոսի Մսերեան),
« և որք, որպէս պատմէր Հայրն իմ, չա-
« նիւք և աշխատութեամբ Ներսէս արք-
« եպիսկոպոսի սկսեալ էին կատա-
« րել և հայ զինուորութիւնքն, որպէս
« ինքն (Հայրն իմ) ականատես եղեալ
« էր. կրթէին յանդիման Էջմիածնի 'ի
« զինաշարժութիւն, ունեւով զառանձին
« գրօշակ 'ի վերայ որոյ նկարեալ կային
« Մասիս, Տապան Նոյի, Մուրը դաստա-
« ռակ, և այլն: Բայց ոչ ընդ երկար
« տևեաց այս. զի 'ի յաջորդ ամի, զինի
« մեկնելոյն անտի արքեպիսկոպոսին
« Ներսէսի 'ի Պէսարապիա, զորքն այն
« արձակեցան »: Կը յաւելու ապա գրին
« ծանօթութեանց մէջ Աղդարարութեան
« և կանոնաց օրինակքն, որոնց ներքեւ
« ստորագրած է Տփղիսու զինուորական
« կուսակալը: Կը շարէ ապա բոլոր հայ
« զօրապետաց և զօրաց անուանքը, զըն-
« դապետ Եանգոր Լազարեան, տեղա-
« պահ Դաւիթ Կորդանով, 6 սպայք,
« 12 ենթասպայք և 109 զինուորք:

Թէպէտ քիչ վերջը Հայոց այս գուն-
դերը ցրուեցան զանազան պատճառաց
համար, սակայն զինուորներէն և սպա-
ներէն շատերը Ռուսաց կանոնաւոր
բանակին մէջ մտան, զորս մեծ գովու-
թեամբ կը յիշէ Ֆրեդրիկ Իր Կովկա-
սեան դաւառաց պատերազմաց պատ-
մութեան մէջ. Եւ որ մեծն է, փաբերիչ
Տաճկաց դէմպատերազմին միջոց, մալի-
ման անուանակոչութեամբ չորս շուկա-
տէ գունդ մը կարճած էր, զոր կազ-
մողք Հայք էին և մահմէտականք, և ո-
րոնք իրենց քաջութեան համար զա-
նազան անգամ գովեցան յաղթող զօ-
րավարէն:

Բայց թողլով այս պատահարքը, ո-
րոնք յետնագոյն ժամանակի մը կը
վերաբերին, մենք հետևինք փաբերիչի
ընթացքին, որ բանակած էր Երասխի
մօտ, և կ'ուզէր Էջմիածնէն անցնելու
պաշարել Սարտարապատ նորայէն
բերդը, սակայն պաշար չունենալով,
Ներսէս արքեպիսկոպոսին գիմեց, որ

կողմը ժողովեալ Հայերէն 1,000 քուցորեն ընդունեցաւ . որով մէկէն փասքեի պաշարումը սկսաւ : Մէջի կուսակալը Հասան խան յետ երկու օր քաղաքին ռմբակոծումը և հարակալին կողմի պարսպաց անկումը տեսնալով և զուլակելով նաև մօտալուտ առումը, երեկոյան դէմ պատգամաւոր զրկեց փաքեիի՝ երեք օր խնդրելու, բայց մի և նոյն միջոցին արեւելեան կողմի դռնէն ելաւ փախաւ : Ռուսք մտան ամրոցը, ուր բաց 'ի բազմաթիւ գերիներէն, գտան 14,000 քուցորենոյ, 13 մեծ ընդանօթ և ուրիշ շատ մը հրադէմք :

Փաքեիի Սարտարապատի մէջ զօրք թողլով, երեսներ պաշարեց, ուր ապաւինած էր նաև Հասան խան . և յետ զայն ռմբակոծելու քանի մ'օր, մարդ զրկեց Հասան խանի անձնատուր ըլլալու : Բայց Հասան հրաման խնդրեց որ նախ կարենայ խորհրդակցիլ Աբաս Միրզայի հետ . փաքեիի չուզելով ժամանակ կորսնցընել, յետ մեծ պատռաստութեան՝ հօկտեմբեր 1ին մեծ յարձակմունք մ'ըրաւ . և յետ ահաւոր կըրակի մը, քաղաքացիք զարհուրած դուռները բացին և Ռուսք բազմութեամբ դիմեցին ներս : Հասան խան ապաւինեցաւ մզկիթի մը մէջ, զոր հայ երիտասարդ մը տեսնալով, մատնեց Ռուսաց . և անոնք ալ գերի բռնեցին : Փութով փաքեիի շարժական պարիսպներ չինեց, որպէս զի եթէ յանկարծ Աբաս Միրզա յարձրկէր, կարենայ քաղաքը պաշտպանուիլ . և հօն թողլով զերաստվաթի զօրավարը իբրև քաղաքապետ, անցաւ Երասխը, հասաւ Դավրիժու գիմաց, որուն քաղաքացիք դռները բացին, և հայ ժողովուրդը եկեղեցական սպասուք ընդ առաւ դիմեց : Փաքեիի Հայոց այսպեան ընդունելութիւնը վարձատրելու համար, խնդրեց 'ի կայսերէն՝ զրկելու 'ի բանակն զլազարոս լազարեան հայկազն հազարապետը, որդի Յովակիմայ . որ երբ հասաւ 'ի Դավրէժ, փաքեիի զինքը քաղաքապետ դրաւ, 'ի մեծ գոհութիւն ամենայն Հայոց :

Փաքեիի այսպիսի յաղթական և արագալաց ընթացքը մեծապէս տագնապեցուցեր էր զՊարսիկս, և Աբաս Միրզա տեսնալով որ անկարելի էր Ռուսաց բանակին առաջին առնուլ . հաւանեցաւ հաշտութիւն խօսիլ . և երկու սպարապետները տեսնուեցան մէկմէկու հետ 'ի Տենկարկան, ուր կը բնակէին Ռուսք : Ռոշուեցաւ որ Երասխը երկու Պետութեանց սահման ըլլայ . Ռուսք Դավրէժէն ելլան . տարուան մը միջոց ազատութիւն տրուի թէ Հայոց և թէ Ատրպատականի ժողովրդոց որ կարենան գաղթիլ ընտանեօք Ռուսաց իշխանութեան ներքև, և Պարսից տէրութիւնը 20 միլիոն ռուպլի վճարէ պատերազմի ծախք :

Սակայն այս պայմանները ընդունելի չեղան Պարսից Պետութենէն, որովհետև Աբաս Միրզա իր հօրը քովէն հեռացած ժամանակ, իր եղբարքը նորէն զօրացեր էին արքունեաց մէջ . ծանր կ'երևար իրենց որ ամենայն պատերազմական գործք միայն Աբասայ յանձնուին և իրեն անուր միայն լսուի պետութեան մէջ . այն պատճառաւ ծածուկ գոհ աչքով մը կը տեսնային Աբասայ գործոց ձախող երթալը, և երբ դաշինքն ալ հաստատեց՝ այն առնէն համոզեցին զՖէթհ-Ալի որ արքայ-որդին առանց բովանդակ արքունեաց հաւանութեան ասանկ դաշինք մը ստորագրելու իշխանութիւն չունէր, և Ֆէթհ-Ալի ոչ այնքան համոզեալ որչափ ժամանակ շահելու համար, իմացուց Ռուսաց Պետութեան, որ Աբաս Միրզայի ստորագրած դաշինքը ոչինչ էր . որովհետև իշխանութիւն չունէր . և իրեն այս ինքնագուրու գործոյն համար՝ թաղին իրաւունքն ալ կը կորսնցընէր և կ'անցնէր իր Հասան Ալի Միրզա եղբօրը : Միեանդամայն ցուցընելուզելով խաղաղութեան փափաքը, իր արտաքին գործոց պաշտօնեայն Ապտիւ Հասան խան բանակը կը զրկէր՝ դաշնագրութիւն մ'ընելու համար :

Փաքեիի որ առաջին տեսութեամբ մեծ սէր կապեր և զմայլեր էր արքայ-

որդւոյն քաղցր և միտնգամայն արի բնութեան վրայ, հիմայ մեծապէս վըշտացաւ տեսնալով անոր այսպէս արհամարուիլը . և որչափ որ ալ գուշակեց թէ այս գործը ֆէթհ-Ալիի և իր արքունեաց գիւտ մ'էր՝ ժամանակ շահելու, այսու հանդերձ սպասեց նոր պաշտօնէին . բայց ծանոյց միանգամայն, որ թէ մերժուէր Աբաս Միրզայի ստորագրութիւնը, այն ատեն ինքը ազատ էր փութով թշնամութիւնը սկսելու . Այս նոր պտորագայիս մէջ Ապտիւլ-Համան խոն ժամանակ խնդրեց արքունեաց հետ խօսակցելու, որ չուզեց խոնարհիլ ռուս զօրավարին պահանջ մանց, և ծածուկ նուիրակներ զրկեց յԱտրպատական գծողովուրդը Ռուսաց գէմ հանելու, միանգամայն բանակին ալ հրաման գնաց, որուն կը հրամայէր տակաւին Աբաս Միրզա, անցնելու զինադադարման գիծը . ֆէթհ-Ալի և աղբունիբը գիտէին որ եթէ կար մէկը 'ի Պարսկաստան որ կրնար փասքելիլ ընթացից խողընդոտն ըլլալ, Աբաս Միրզա էր միայն, որ գիտէր եւրոպական օրինոք կուրիլ, և անկէ աւելի զիտցեր էր և գիտէր բանակին մեծ սէրը և համակրութիւնը շահիլ, որ պատրաստ էր ապստամբութեան՝ եթէ յանկարծ փոխուէր հրամանաւորութենէն իրեն սիրելի աղբայորդին :

Շահը կը համարէր որ Ռուսք աւելի կակուղ եղանակի մը կը սպասեն, բայց խաբուեցաւ . և փաքելիլ Պարսից կողմանէ դաշանց աւերուիլը տեսնալով, ինքն ալ սկսաւ թշնամութիւնը . և մինչ ձիւնը և սառը դեռ ամեն կողմ տիրապետած էր, Ռուսաց բանակը շատ աւելի վարժ ձմեռնային եղանակին քան իրենց թշնամիքը, երեք մաս բաժնուած կարեց անցաւ դաշտերը, հասաւ քաֆլանդուհի ստորոտները և ձախ թէն ալ առաւ զԱրտաւիլ, և պտորաստուեցան ընթացքը ուղղել դէպ 'ի Դէհրան :

Այսպիսի երազ և յաղթական ընթացք մը շուարեցուց զՇահը, որ հրաման

զրկեց փութով Աբասայ՝ առջի դաշնագրութիւնը հաստատել : Աբաս նուիրակ հասուց իւր բարեկամին, և երկու բանակաց սպարապետը իրենց սպայակոյտով գումարուեցան 'ի թիւրքմէնայ, ուրստորագրուեցան հաշակաւոր թիւրք մէկուայի դաշինքները (1828 փետր. 10-22), որով Աբասիս սահման կ'ըլլար երկուց Պետութեանց, և Ռուսք կը շահէին Երևանու և Նախիջևանու գաւառները, ինչպէս նաև զԷջմիածին . բաց սակէ, 20 միլիոն ռուպիլ պատերազմի ծախք, իսպաղից ծովուն ազատ վաճառականութիւնը և հրաման մը որ փափաքողը կտրենան գաղթիլ դէպ 'ի Ռուսաց երկիրները : Փաքելիլ իր այս ամենայն քաջութեանց համար Կոնստանտնուպոլսէ Երևանու կամ Երևանքի տիտղոսը կ'ընդունէր իր Պետութենէն :

Դաշանց ստորագրութենէ վերջը, կայսեր եղբոր Միքայէլ Պաւլովիչի տօնն ըլլալով (նոյ. 8), փաքելիլ Պարսից արքայորդւոյն առջև չբեղ զօրահանդէս մը կատարեց, որուն մէջ տեսնուեցաւ երկուց զօրավարաց թէ փոխուր բարքերնին և թէ մտերմական սէրերնին : Այս զօրահանդէսը ժամանակի լրազիրը նկարագրած ըլլալով, խնորժելի է և մեզ զայն քաղել յանուանի Մանր Մագիստրոսէ . « Ի 10 ժամու առաւօտեան, « հրամանատար կուկասեան գնդին « ղեներալ Այուդանդ Պասկելիչն հան « դերձ բոլոր մեծամեծք՝ եկն 'ի բա « նակն 'ի վրան եկեղեցւոյ, ուր զինի « աստուածային պատարագի՝ մատու « ցան Տնանու Աստուծոյ աղօթք գոհու « թեան հանդերձ արձակմամբ թընդ « անթից : Զօրքն կային շուրջ զխորա « նաւ եկեղեցւոյն վառեալ յանթե « ըի սպառազինութիւն չուոյ » : Աստուածային պաշտօնէն վերջը, եկաւ Աբաս Միրզա իր 15 ամեայ խոսրով Միրզա որդւոյն հետ . փաքելիլ ալ ընդ առաջ ելլալով « փոխադարձ եղանակաւ բարեկամութեամբ ողջունեցին զմիմեանս » : Ետոյն հարատիւ քաւազ գնդապետը ներկայացուց իրեն « զան « գիր յայտարարութիւն և զտոմսակ

զինուորական», և անկէ վերջը փաս-
քելի հետ սկսաւ անցնիլ բանակին
ճակատին դիմացէն, հորքընեւիլ իւրա-
քանիւր դնդին և գնդապետին որպի-
սութիւնը, և ամենուն « քաղցրամօք
բանիւք զուլշոյն մատուցանելով », կ'ընէ
գրիչը : Սկսաւ ապա զօրահանդէսն, և
ամենուն իր գիմացէն անցած ժամա-
նակ՝ արքայորդին ուշի ուշի կը գիտէր
և կը գտէր Ռուսաց բանակին շարժ-
մունքը, երազութիւնը և զգեստները :
Զօրահանդէսէն վերջը՝ փառքիւ զԱբաս
Միրզա հրաւիրեց առանձին վրան մը,
թորում մեծահաց նախաճաշ մը պա-
տրաստած էր : Նոյն տաղաւարին մէջ
առանձին սենեակ մը պատրաստուած
և զարգարուած էր Աբաս Միրզայի հա-
մար ըստ արեւելեայց, յորում սեղան մը
դրուած էր երեք անձանց համար : Մէջ
տեղը նստաւ Աբաս Միրզա, աջ կողմը
փառքիւ և ձախ կողմը իր խորով Միր-
զա որդեակը : Դեռ անդին ուրիշ սեղան-
ներ ալ դրուած կային, ուր բազմեցան
երկու կողմին ալ զօրավարք և աստի-
ճանաւորք :

Այնքան չքեղ եղաւ հացկերոյթը, որ
« պակաս չերևէր քան զինշոյս մայրա-
քաղաքացի եւրոպիոյ » : Սեղանոյն ա-
տեն՝ կային նաև երաժշտական գործիք
և երգիչք, որոնք կը քաղցրացնէին հան-
դէսն : և կոչնականք բազմաթիւ բա-
ժակներ քամեցին վասն կենաց կայսեր,
Միքայէլ Պաւլովիչին, աղաղակելով.
« կեցցէ արքայ . յետոյ արբին վասն
« առողջութեան Աբաս Միրզայի և
« որդւոյ նորա՝ ցոնկապողաց խաղա-
« ղութեան և ՚ի վերջոյ վասն առող-
ջութեան հրամանատարի կովկասեան
գնդին » :

Այս շքեղ և սիրալիր հանդէսէն վեր-
ջը, ոչ միայն երկու զօրապետք մեծ սի-
րով կապուեցան իրարու հետ, այլ և
բովանդակ Ռուսաց բանակը զմայլե-
ցաւ Աբաս Միրզայի վրայ, և արքայոր-
դին ալ փոխադարձաբար անոնց գլխա-
ւորաց համար խնդրեց և ընդունեցաւ
իր հօրմէն զանազան պատիւներ և նշան-
ներ : Այս պատուելոյ մէջ կը գտնուէր

նաև Ղազարոս հոյկազն գնդապետն
ալ, որ քիչ վերջը հայ գաղթականու-
թեանց հանդիսագիր պիտի կենար .
ինքն ալ Աբաս Միրզայի ձեռքով ընդու-
նեցաւ Սախլաժու և Արեգական նշանին
առաջին աստիճանը :

Խաղաղութեանց ստորագրուելէն
վերջը, Աբաս Միրզա Պարսկաստան քա-
շուեցաւ : և հօն պատերազմական հան-
դերձները մերկանալով սկսաւ ընտա-
նեկան կենաց քաղցրութիւնը շնչել, և
ամենէն աւելի զբաղիլ իր որդւոյ զաս-
տիարակութեան համար, որոնց վրայ
կարգէ դուրս սէր մ'ունէր : Իր այս
մեծ փափաքը լեցնելու համար, հարկ
եղաւ եւրոպացի ուսուցիչներու դիմել,
որովհետև Շիրազի և Մէշէտի հռչակա-
ւոր համայնարաններուն մէջ հազիւ ա-
րաբերէն և Ղուրանի մեկնութիւնքը
կը սորվեցընէին : Բարեբաղդաբար, թէ
զժաղդաբար չեմ գիտեր, պակաս չէին
արբունեաց մէջ անգղիացի զինուորա-
կանք, որոնք յանձն առին սիրով ապա-
գայ չափերու դաստիարակութիւնը.
և եթէ մանրամասն չեմ գիտեր անոնց
անունները, ուսուցիչքը և ուսուցանէին,
ստիպյալ Մոհամմէտ Շահին, որ Աբաս
Միրզայի որդին և իր պապուն յաջորդն
եղաւ, ցըցուցած մեծ փափաքէն թէ աշ-
խարհագրական ուսմանց և թէ պատմու-
թեան համար, կը գուշակեմ, որ Աբաս
Միրզա ուսումնական և միանգամայն
զինուորական դաստիարակութիւն մը
տալ փափաքեր էր իր որդւոյ : Զինուո-
րական արհեստին համար, մեծ նպաստ
եղաւ Դաւիթ խան Սալինեանց հայկ-
ազն կտորձ զօրավարը, որ յետոյ Ա-
բասայ որդւոյն Մոհամմէտ Շահի թա-
գաւորութեան ժամանակ Պարսկա-
ստանի առաջին զօրավարն էր, և որ
այնքան խառնաշփոթ կռիւներու մէջ
հաւատարիմ մնաց իր սիրեցեալ տիրոջ
որդւոյն, և գլուխ չձուց ֆէթհ-Ալիի
բազմաթիւ որդւոյն սագրանաց : Կը
մնար միայն ամենէն վերջը մեծագոյն
դաս մը, զոր Աբաս ժամանակին կը
պատրաստուէր օրինակով միայն տալ
իր որդւոյ . բայց, աւաղ, վաղաժաման

մահ մը խելով զինքը բոլոր իր սիրելեաց և բոլոր Պարսկաստանի գրկէն, ժա. մանակ չտուաւ որ օր մը գահ ելլալով սորուեցընէ իր որդւոց և թուանց թա. գաւորելու և կառավարելու ամենա. դժուարին և ամենադժուան դասը, և զա. նիկայ քաղաքացւներու միջոցները:

Որչափ որ Աբաս Միրզա կը խորհէր պատերազմելէն և միտքը դրած էր առ. տնին օրինաց զբաղիլ, իր եղբարքը՝ ո. րոնք չէին դադրիր արքունեաց մէջ նո. րանոր հնարագիտութեամբ ատելի ը. նել զինքը, կամ գոնեա ձեռքէն յա. փըշտակել գահու յաջորդութիւնը, հի. մայ անգղիացի նուիրակաց հետ միա. նալով սկսան նորէն մախալ ընդդէմ Ռուսաց: Բետին աստիճանի նախա. տինք մը կը հուշակէին թիւրքմէնչայի դաշինքը, որ իբր Պարսից տէրութիւնը ընկճեր և տկարացուցեր էր. և ասոր պատճառն արքունեաց շփոթից մէջ բնտրուելու տեղ, ամենայն յանցանք ա. նոր վրայ կը ձգէին, որ մահն աչք առած՝ արութեամբ հայրենեացը փառաց հա. մար կուտեր էր: Այնքան ատելութիւն. նին սաստիկ էր ընդդէմ Ռուսաց որչափ որ գիտէին թէ միակ անոնց սիրելի և բարեկամութեան չղթայն է իրենց եղ. բայրն Աբաս, և խզելով այն զօրը՝ կը յուսային խզել նաև անոր պատուոյն բովանդակ կապը. իրենց այս մտածու. թիւնը՝ ի գործ դնելու համար, հարկ էր գրգռել նաև զժողովուրդը, որ արդէն մեծապէս տգիտ էր թիւրքմէնչայի դաշնաց վրայ: Գիտէին իրենք՝ որ ամ. բոխը կը զարհուրէր ձեռք երկնցրնե. րու Աբասի վրայ, բայց կը յուսային որ յետ միանգամայն Ռուսաց բարե. կամութիւնը քակուելով՝ արքայորդին երկասյրի սուսերաց մէջ կը գտնուէր, կամ պիտի դիմէր ընդդէմ իր մտե. րիմ բարեկամաց և անոնց աչքէն պի. տի ելլար, և կամ չուզելով հօրը կա. մաց համեմատ պատերազմի երթալ, անհնազանդ պիտի գտնուէր և զըր. կուէր գահուն ժառանգութեան իրա. ւունքէն:

Այս խորհրդոց և մտածութեանց

մէջ էին իր եղբարքը, երբ յանկարծ օր մը մոլեռանդն կրիւք բորբոքելով ա. միկը, վազեց Ռուսաց դեսպանատան վրայ, կոտորեց չարդեց գուռն և սե. նեակ, և անողորմաբար խողխողեց զնրկապոյտոֆ դեսպանն բոլոր ընտա. նիօք և ծառայիք:

Մեծ էր այս յանցանքը և պատե. րազմով միայն քաւելի. և Պարսից արքունիքը փոխանակ մէկէն նիկողա. յոսի դիմաց ինքզինքը արդարացընելու, պատերազմի սկսաւ պատրաստուիլ: Շահին որդիքը հասած կը համարէին իրենց նախանձուն վրէժխնդրութեան ժամանակը և կարևոր կը տեսնային պատերազմները սկսիլ: Զայն աւելի յայտնի ընելու համար, հռչակուեցաւ որ Հասան—Ալի Միրզա արքայորդին 50,000 բանակով Դավրէժ հասեր է և ըստ դաշնաց թիւրքմէնչայի՝ Աբասա. պատի մէջ եղած հրանօթքը կը պա. հանջէ: Մի և նոյն միջոց Դավրէժու ռուս հիւպատր՝ Անգղիացուց խորագէտ սադրանօք թողուց զԴավրէժ, որով և Ռուսիոյ և Պարսկաստանի մէջ պաշ. տօնական հաղորդակցութիւնք կըտ. րեցան: Պարսիկները մեծ յոյս ունէին յաղթելու Ռուսաց, որոնք նոյն մեջո. ցին Տաճկաց հետ կը կոտէին Հայա. ստանի մէջ, և կը կարծէին զփառքնիչ երկու թշնամի բանակաց մէջ փակել: Բայց յանկարծակի Ախցիկայի ամուր բերդին առման լուրը ամենայն ինչ կերպարանափոխ ըրաւ: Աբաս Միրզա որ լուսթեամբ ամենայն շարժմունք կը դիտէր, հասարակաց սարսափը իրեն նպաստ առնելով՝ հուշակեց, որ եթէ յանկարծ իր եղբարքը ուզէին բռնի կուռիլ ընդդէմ Ռուսաստանի, ինքը կը ստիպուէր Ռուսաստան քաշուելու: Պատուիրեց միանգամայն որ իւր ար. քունիքը սուգի նշան կրեն ռուս դես. պանին մահուան համար: Ասով ալ գոհ չըլլալով և բացէ ի բաց չուզելով առ. րուիլ Ռուսաց հետ, իր համհարդը Ալի—Եիւզպաշի առ փառքնիչ ղրկեց բա. րեկամական թղթով մը, խորհուրդ հարցընելու թէ ինչ պէտք էր ընել այս

պարագայիս մէջ, փառքեիչ փոխադարձ սիրալիր նամակով մը խորհուրդ տուաւ իր եղբայրներէն մէկը կամ իր որդին Բէդրպուրկ զրիել առ կայսր և արդարացրենք եղածը : Քուտալէֆ իշխանը, համհարդ փառքեիչի, անձամբ այս նամակը տարաւ 'ի Դավրէժ առ Աբաս Միրզա, որ արդէ սկսեր էր կազմել իր որդւոյն ճամբորդութեան հանգիւրդները, և մայիս 10ին (1829) խօսրով Միրզա կը հասնէր 'ի Տփղիս յանձնարարական թղթով մ'առ փասքեիչ, յորում Աբաս Միրզա զինքն իր ամենէն մտերիմ բարեկամը կ'անուանէր, և կը թախանձէ հայր մ'ըլլալ իր որդւոյն և պէտք եղած խորհուրդները տալ իր նուիրակութեան համար :

Սակայն խօսրով Միրզայի հետ եղած իշխանը չուզեցին յանձն առնուլ այս նուիրակութիւնը, պատճառ բերելով որ իրենք այսպիսի նուիրակութեան մը հրաման չունէին : այսու հանդերձ փասքեիչ որ Աբաս Միրզայի դիտաւորութիւնը գուշակեր էր, զանոնք յամընթաթացիք ճամբայ դրաւ դէպ 'ի Բէդրպուրկ : Յետոյ երբ զինքն նոր յալթուութիւններ կատարելու 'ի Հայաստան, Շահը փուշով ուրախակցութեան թըղթեր հասոյց առ իւր թուրք 'նկրդալուս կայսեր համար, և այս թղթերը հասան մինչդեռ խօսրով Միրզա տակաւին կը գտնուէր 'ի Նովկորոտ : Ուսկից ճամբան շարունակելով հասաւ Ռուսաց մայրաքաղաքը, և յետ արդարացրելու դեսպանին սպանութիւնը՝ իբր մոլեռանդն խուժանին կողմանէ եղած, մեծ պատիւ և ընդունելութիւն գտաւ Կայսերէն :

Ահա այս դէպքով կը լինայ Աբաս Միրզայի թէ զինուորական և թէ քաղաքական կեանքը Պատմութեան առջև Մնացած երկու տարիներն՝ որոնք կանխեցին իր տարածամ մահը, իր կուսակալութեան մէջ անցուց, և կ'ախորժէր բնակիլ ընդ երկար 'ի Դավրէժ, որ քան զամեն ուրիշ քաղաքներն աւելի եւրոպական կերպարանք մ'ունէր. միանգամայն հեռի իր եղբայրներէն, ու

րոնց նախանձուէն պժգացեր և վշտացեր էր և որոնք չէին դադրեր բնախոժոռ աչքով նայելու իրեն փառաց վրայ : Եւ որոնց յանդգնութիւնը այնչափ էր՝ որ և ոչ իսկ իրենց յանձնեալ գաւառաց տուրքերը կը զրկէին յարքուխիս : Սակայն ասոնք ամենն ալ աննշան անձինք չէին, կային նաև մէջերին զօրաւորներ և կարիճներ, յորս մանաւանդ Մահմատ-Ալի անդրանիկը, որ կրմանշահի մարդպանն էր և շատ նմանութիւն ունէր իր բարուց մէջ ներքինի Մահմատ Աղային, և անոր պէս « այր հզօր և քաջ 'ի մրցմունս պատեւրազմաց, այլ բոս առաջնոց ինքնախալաց վարէր զիրակութիւն պատերազմին » : « Մինչդեռ Աբաս, կ'ըսէ նոյն թաղտեանց սարկաւազը, 'նորանոր « կարգաց և կանոնաց զհետ եղեալ, եւ « ըրպական հրահանգք կրթէր զզօրս « իւր և աշխարհին ինուլթեան մեծա « պէս խնամ տանէր » : Բայց այս մեծամեծ յատկութիւնները, այնքան ամաց մեծամեծ յոյսերը, ծովսի մը պէս յանկարծ աներևութացան և անհետ ցրուեցան :

Չորս գուշակութիւններով սկսեր էր 1833 տարին. երկիրն առանց վարչի մնալով մեծ յուզման մէջ էր. մաղձախոր երթալով կը ճարակէր, և ութսնամեայ Ֆէթհ-Ալի Շահը վարչութենէն, բայց ոչ 'ի թագաւորելոյն՝ ձանձրացած, կառավարութիւնը թողուցած, ամարաստունէ ամարաստուն կը թափառէր : Ոհա այս ամարաստուններէն մէկուն մէջ էր, երբ իր թմբութեանէն արթննալով իմացաւ որ անգլիկ մաղձախոր հնձեր էր բոլոր Պարսկաստանի և բոլոր Եւրոպիոյ միակ սիրելի և պատուելի իշխանը, Աբաս Միրզա չէհզատէն, իւր ամենահնազանդ և ամենաքաղցր որդին, եւ իր տխուր վշտաց մէջ միակ միութարութիւն համարեցաւ Աբասայ որդին զՄահմատ, հայր այժմեան Նոսրէտօղին Շահին, իրեն դահուս ժառանգ հրատարակելու, և որ երկրորդ տարին իր պապուն մահուրէն վերջը իրաւամբ ժառանգեց զայն :

Շատ ցանկալի էր մեզ գիտնալ Արաւ Միրզայի կենաց վերջին զբաղմունքները. կը մնայ մեզ ցաւիլ այս մեծ կորստեան վրայ զոր ունեցան Պարսիկք և Պարսկահայք՝ զրկուելով այնպիսի իշխանէ մ'որ օր մ'իրենց երջանկութիւնը պիտի ըլլար, և որ չթագաւորելով հանդերձ՝ ամբողջ ժամանակի պատմութիւնը իր վրայ կենդանացուցած է, նա մանաւանդ իր անուամբը զայն մեզ ակործնելի թելով ըրած է : Եւ այն է զարմանալին՝ որ մինչ իր պատերազմաց շարերը ձախող ելք մ'ունեցան, այսու հանդերձ եթէ ուսու և եթէ ուրիշ եւրոպացի գրիչք չեն տարակուսիր իրեն « կարիճ, հմուտ և կարգաւէր » զօրավարի անունը տալ : Եթէ այն մասին յորում չյաջողեցաւ՝

այսքան զովեստներ ընդունեցաւ, ինչ պիտի ըսէին հապա՝ իր մեծամեծ յատկութեանց, մանաւանդ իր « քաղցր ամօք » համբոյր բնաւորութեան վրայ, եթէ օր մը դահ ելլալով սպեհը զայն բոլոր իր հպատակաց վրայ : Արդարեւ տխուր է մեզ այսպիսի չքեղ իշխանի պատմութիւն մը չակած կնքել, և փոխանակ ականակապ թաղով պսակելով՝ այնքան մեծ յատկութիւններ սեղամբանով մը յաւիտեանս փակել. սակայն այն սեղամբանը, այն խոյրաւոր կոթողը դարուց 'ի դարս կենդանի ձայն մը պիտի ըլլայ բոլոր Պարսից չէհ. զատեներուն այն սիրոյն վրայ, զոր պէտք են ունենալ առ իւրեանց հպատակս և առ աշխարհն :

Հ. Մ. ՆՈՒՐՈՒՅԱՆ

Վասն լուսնի և աստեղաց

... Չլոյսն էաւ Արարիչն՝ զոր արար յառաջին աւուրն, և արար աման օդեղէն արեգական և լուսնի և աստեղացն. և յատակ լոյսն և զլերմութիւնն էարկյալ րեգական, և զայլ աղօտն և զիկազոյնն յամանն լուսնին, և զմրրատեսակ յաստեղացն. զի որպէս լուսինն շիկազոյն և գէջ թուլացուցանէ, և ոսին առնէ զըրոյս և զտունկս : Ոմանք ասեն՝ թէ լուսին զլոյսն յարեգականէ առնու, և այլը չհաւատան : Այլ որպէս յարարչութենէն որիշ կազմեցաւ լուսնին ամանն և արկաւ 'ի նմա լոյսն, նոյնպէս կայ և մնայ : Քանզի փորձաբիցոց է լուսին իբրեւ զաման երկրեբանի, յորժամ պակասիլ սկսանի ընդ մի դուռն ելանէ և զթիկամբն պատի, և զայ՝ մինչ և ամենեին պակասի և սպառի 'ի ներքոյ գիհացն. և մինչ 'ի վերին կողմն հասեալ լինի՝ մինչ 'ի միւս դուռն ընդ որ 'ի ներքս մտեալ՝ զայ դարձեալ մեղմով և լուսնի գիորամէջն՝ 'ի լրմանէն, և դարձեալ ելանէ 'ի պակասեալն : Արեգակն զինչ

սայլի ակն երթայ, զոր ասնն այլք իբրեւ զլրախաղաց և իբրեւ զարօրիս. իսկ լուսին 'ի թռիչ երթայ յառաջ սողալով, և աստեղքն ոստոստեալ : Արեգակն լուսոյ ակն կամ մեծ ակն թարգմանի, և լուսին՝ եթէ լոյս ունի :

ՏՈՒՆԱԿԱՐԱՅԱՆ

Չի'նչ է զոր անգիտանայ մարդ

Յաշխարհիս հինգ (իբր) 'ի մարդկանէ անգիտելի է. առաջին՝ որ մարդ զմարդու խորհուրդն չի գիտէ, և ոչ հրեշտակք և ոչ գեղք : Երկրորդ՝ որ 'ի աւուրս 'ի վաղն չի գիտեմք թէ ինչ պիտի լինի. երրորդ՝ որ զինչ որ սկսնուիմք 'ի գիտեմք թէ ինչ իբր պիտի յաւարտի 'ի բարի թէ 'ի չար. չորրորդ՝ որ մահու օրն անգիտելի է. հինգերորդ՝ որ զկատարածի օրն չի գիտեմք : Երեք իբր՝ որ զմարդն 'ի չարէն 'ի զատ կու պահէ. խղճմտանք, և երեսին ջուրն, և բնական խեղճն, իբրեւ առաջնորդ և զրաւուղ է :

ՈՍԿԵՆԻՍԻՍԻԿ